ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

02 ապրիլի 2021 թվականի N 147-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԻՆ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՆԻՇԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՃՇԳՐՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ԶԵՆՔԻ, ԶԻՆԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 18-րդ հոդվածով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021 թվականի հունվարի 15-ի N23-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական աշխատանքային խմբի 2021 թվականի մարտի 26-ին կայացած նիստի արձանագրությունը՝

ո ր ո շ ո ւ մ ե մ.

1. Ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելվածի:
2. Աշխատանքային խմբի ղեկավար Կ.Ավանեսյանին՝

1) մեկամսյա ժամկետում համապատասխան կառույցների ներգրավմամբ ճշգրտել մարզի սահմանամերձ բնակավայրերի սահմանին հարակից տարածքներում տնտեսական գործունեության սահմանանիշերը և տարածքները, ուսումնասիրել ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով համայնքներին հանձնված զենքի, զինամթերքի պահպանման ու օգտագործման պայմանները, մեկշաբաթյա պարբերությամբ տեղեկացնել կատարված աշխատանքների մասին ու ներկայացնել առաջարկություններ,

2) աշխատանքային խմբի աշխատանքներին ներգրավել ՀՀ Սյունիքի մարզի համայնքների սահմանամերձ բնակավայրերի վարչական ղեկավարներին,

3) ապահովել սահմանամերձ բնակավայրերի բնակչության իրազեկումը կատարված աշխատանքների մասին:

3. Մարզպետարանի գլխավոր քարտուղարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

02.04.2021

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ X Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Подписано: POGHOSYAN MELIKSET 4108600096

2021թ. ապրիլի 02
ք. Կապան

ՀԱՎԵԼՎԱԾ
Սյունիքի մարզպետի
2021թ.ապրիլի 2-ի
Ա որոշման

ԿԱԶՄ
ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՆԻՇԵՐԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ ՋԵՆՔԻ ՈՒ ՋԻՆԱՄԹԵՐՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

1.	Ավանեսյան Կարո	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, աշխատանքային խմբի ղեկավար
2.	Հովհաննիսյան Դավիթ	ՀՀ ոստիկանության Սյունիքի մարզային վարչության պետի ծառայության գծով տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ, աշխատանքային խմբի անդամ (համաձայնությամբ)
3.	Ավետիսյան Վիգեն	ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի 2-րդ սահմանապահ ջոկատի շտաբի պետ, փոխգնդապետ, աշխատանքային խմբի անդամ (համաձայնությամբ)
4.	Սահակյան Ռոմա	Հայաստանի փրկարար ծառայության Սյունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, փոխգնդապետ, աշխատանքային խմբի անդամ (համաձայնությամբ)
5.	Կոստանդյան Մուշեղ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժին – մարզային հողային պետական տեսչության պետ, աշխատանքային խմբի անդամ
6.	Երեմյան Սմբատ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ, աշխատանքային խմբի անդամ
7.	Մարտիրոսյան Արթուր	ՀՀ Սյունիքի մարզի Կապանի համայնքի ղեկավարի խորհրդական, (համաձայնությամբ)
8.	Հովսեփյան Մենուա	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավարի տեղակալ, (համաձայնությամբ)
9.	Քոչարյան Կարեն	ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքի ղեկավարի տեղակալ, (համաձայնությամբ)
10.	Առաքելյան Զոհրապ	ՀՀ Սյունիքի մարզի Քաջարանի համայնքի ղեկավարի տեղակալ, (համաձայնությամբ)
11.	Սարգսյան Վանիկ	Մեղրիի համայնքապետարանի աշխատակազմի կազմակերպական բաժնի պետ, (համաձայնությամբ)
12.	Համբարձումյան Համլետ	ՀՀ Սյունիքի մարզի Տաթևի համայնքի ղեկավարի տեղակալ, (համաձայնությամբ)
13.	Էլյազյան Գագիկ	ՀՀ Սյունիքի մարզի Տեղի համայնքի ղեկավարի տեղակալ, (համաձայնությամբ)

4/2/2021

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано. MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի

գլխավոր քարտուղար՝ Է. Մարտիրոսյան